

ՍՏՈՒԳԻՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԴ

- Թվարկված դեպքերից որում են մարմնի վրա ազդող ուժերը միմյանց համակշռում:
 - I. Գնացքը շարժվում է կայարանից:
 - II. Մարմինը կատարում է ազատ անկում:
 - III. Գունդը կախված է զապանակից:
 - IV. Օդապարիկը հավասարաչափ բարձրանում է վեր:
 1. I և IV
 2. I, II և IV
 3. III և IV
 4. միայն III
- Մարմնի վրա ազդող ուժերի համագորը զրո է Արդյոք շարժվում է մարմինը:
- Տվյալ զանգվածով մարմնի վրա ազդող հաստատուն ուժը մեծացավ երկու անգամ Ինչպե՞ս փոխվեց մարմնի արագացումը:
 1. մեծացավ երկու անգամ
 2. փոքրացավ երկու անգամ
 3. մեծացավ չորս անգամ
 4. չփոխվեց
- Փոխազդեցության արդյունքում առաջին սայլակը ստացավ երկու անգամ ավելի մեծ արագացում, քան երկրորդը: Ինչի՞ է հավասար երկրորդ և առաջին սայլակների զանգվածների հարաբերությունը:
 1. 0,25
 2. 0,5
 3. 1
 4. 2
- Ի՞նչ արագացում է ձեռք բերում 5 կգ զանգվածով մարմինը 25 Ն ուժի ազդեցությամբ:
- Ինչպե՞ս է փոխվել գնդիկի վրա ազդող ուժը, եթե դրա արագացումը մեծացել է 4 անգամ:
- Մարմինը 50 Ն ուժի ազդեցությամբ շարժվում է 5 մ/վ² արագացմամբ: Ի՞նչ ուժի ազդեցությամբ այդ նույն մարմինը կշարժվի 10 մ/վ² արագացմամբ:
- Երկիրը խնճորին ձգում է 3 Ն ուժով: Ի՞նչ ուժով է խնճորը ձգում Երկրին:

Պատասխանները՝ 1. Գ, 3), 2. կախված է շարժման պայմաններից, 3. 1), 4. 4), 5. 5 մ/վ², 6. 5 մ/վ², 7. 100 Ն, 8. 3 Ն: